մենք այսօր լիովին խրախանացաւ — ոչ միայն նոյն իրան Միացեալ ընկերութեան մէջ — այլ և իրականութեան դաշտ. այնպիսի մի մարդու խմբի և համախոհների մէջ ևս, ինչպէս Ներսէս պատրիարքն է։ Ինչ պիտի անեն այս անձինք յետոյ և ինչով պիտի կարողանան իրանց խիղճը հանգստացնել այն փոքրոգի և ապիկար մարդիկ, որոնք փոխանակ քաջալերելու և սիրտ տալու մի օգտակար գաղափարի, աշխատում էին բոլոր ժամանակ վհատացնել ու ջլատել այդ գաղափարը յայտնողների ջանքերը։

Այսպէս թէ այնպէս, երբ ճշմարտութիւնը այսչափ փայլուն յաղթանակ տարաւ, մենք պարտաւոր ենք նախ' հրապարակապէս և բոլոր սրտից մեր ջերմ շնորհակալութիւնը յայտնել մեր բարեկամին, նրա կրած բոլոր նեղութիւնների և բարոյական զրկանքների համար, երկրորդ' հարկաւոր է խրատ առնել այս օրինակից միւս անգամ ազնուաբար և մարդավայել կերպով վերաբերվել դէպի այն գործիչները, որոնց միակ մխիթարութիւնը իրանց անշահախնդիր գործունէութեան մէջն է.

Գաս. Նազարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Порядокъ» լրագրի մէջ կարդում ենք, որ Ս. Պետերբուրգի թիւրքաց դեսպան, Շակիր փաշան, շատ յաճախ է այցելում այժմ արտաքին գործերի մինիստրութեան կառավարիչ պ. Գիրսին։ Նրանց խօսակցութեան առարկան, ինչպէս հաղորդում են ռուս լրագրին, գլխաւորապէս լինում է ընթացող քաղաքական հարցերի մասին, որոնք վերաբերվում են երկու պետութիւնների փոխադարձ յարաբերութեանը։ Դեսպանը ներկայացրեց մի ծրագիր, որի մէջ յայտնում է թէ ինչ ձևով թիւրքիան կամենում է վերջացնել իր դրամական հաշիւները Ռուսաստանի հետ և վճարել նրան վերջին պատերազմից գոյացած պատերազմական ծախսը (կոնտրիբուցիան)։ Խօսակցութեան առարկան լինում է նոյնպէս և բուլղարական իշխանութիւնը։ Թիւրքիան գոհ է բուլղարական իշխանի վերջին ժամանակ արած փոփոխութիւններից։ Ինչ որ վերաբերվում է Հայաստանի մէջ մտցնելի ռէֆորմներին, Շակիր փաշան յայտնել է պ. Գիրսին, որ առժամանակ հայոց խնդիրը դեռ ևս չէ կարող իր վերջնական լուծումը ստանալ, որովհետև Եգիպտոսում ծագած անկարգութիւնները խլում են Բ. Դրան դիպլոմատներից իրանց ամբողջ ժամանակը և այդ հարցը գրաւում է նրանց ամբողջ ուշադրութիւնը։ Բացի սրանից հայոց խնդիրը, թիւրքաց դեսպանի կարծիքով, չէ կարող այժմ քննված լինել այն պատճառով էլ, որ ապստամբական յուզմունքը Քիւրդիստանում դեռ ևս ճնշված չէ, իսկ նախ քան երկիրը կատարելապէս կը խաղաղվի, ապարդիւն կը լինէր ձեռնարկել Հայաստանի մէջ ռէֆորմների մտցնելուն։

Այսօր, շաբաթ օր, ժամը 7-ին երեկոյեան, ԹԻՖԼԻՍԻ Ներսիսեան օրիորդաց դպրոցում, գումարվելու են հայ ուսուցիչներ, որպէս զի եկող ամառը լինելու հայոց ուսուցչական ժողովի նախապատրաստական ամենակարեւոր կարգադրութիւնների մասին խորհրդակցեն։ Այսօրվայ ժողովի մէջ պէտք է ընտրվի առաջիկայ ժողովի համար պատրաստական, կամ կարգադրական յանձնաժողով։

«Порядокъ» լրագրում կարդում ենք որ այս օրերս լոյս տեսաւ Ս. Պետերբուրգում վիմագրական ֆրանսիական լրագրի առաջին համարը, որ կրում է «Correspondance Universelle» անունը։ Լրագիրը կը հրատարակվի ամեն օր պ. Կորօլինի խմբագրութեամբ և կարժենայ 275 րուբլ տարեկան։

Կ. Պօլսից մեզ հաղորդում են որ Վիեննայի «Ժուռնալ դ'Օրիան» լրագրին արգելվեցաւ Թիւրքաց պետութեան մէջ մուտքը։ Ի հարկէ այդ արգելման պատճառը այն յօդուածներն են, որ ֆրանսիական լրագիրը նուիրել է հայոց խնդրին։ Բայց ինչ կը շահի դրանով Թիւրքիան, հարցնում է մեր Թղթակիցը։ Այնու ամենայնիւ ամբողջ Եւրոպան կը կարդայ այդ թերթը և ի հարկէ նա դրանով աւելի էլ մեծ նշանակութիւն կը ստանայ։

Մի օրինակ մեր քահանաների տգիտութեան։ Հաւլաբարի մի պարոն փող էր ժողովում Հայաստանի սովելոց համար և մի ծանօթ քահանային էլ խնդրեց մասնակցելու այդ հանգանակութեան։ Բայց սա սառնութեամբ մերժեց ասելով: «Ախպէր, ով ասես Հայաստանի համար փող ա հաւաքում, փող ա զրկում, բաս եարաբ Աստուծոյ, էդ Հայաստան քաղաքը չը կշտացաւ մինչև հիմայ, խակի խելքս չէ կտրում»։ Արժանի տէր հայրը կարծում էր թէ Հայաստանը մի քաղաք է։

Մեզ հաղորդում են որ սեպտեմբերի 29-ի գիշերը Շաւ-գիւղ ասված Թիֆլիսի թաղի Ս. Լուսաւորիչ եկեղեցու մօտ, Դոզիկի բաղանիքի կամուրջի վրա մի մարդ են սպանել։ Սպանվածը, ասում են ֆրանսիացի է եղել, որի գրպանում գտնվել է 180 րուբլ փող։ Թշուառ ֆրանսիացուն ոչխարի պէս մորթել են չարագործները և փախել են։ Բայց զարմանալին այն է, որ փողերը չեն տարել։ Երևի չարագործները այդ հրէշային գործը կատարելիս, մարդիկ են վրա հասել և այդ պատճառով փողերը տանել չը կարողացան։

ԹԻՖԼԻՍԻ Վանքի մայր եկեղեցու աւագ քահանայ տէր Յովհաննէս Սարգսեանց, որ արդէն երեք ամիս զրկված է եղել իր քահանայական թէ ժողովրդի և թէ գանձանակի արդիւնքներից, վերջապէս այս օրերս ստացաւ կօնսիստորիայից իր երեք ամսվայ արդիւնք 23 րուբլ և 5 կոպէկ։ Արժանապատիւ աւագ քահանան հասցրեց մեր խմբագրութեանը այդ 23 րուբլ 5 կոպէկ, որպէս զի ուղարկենք այդ գումարը Կ. Պօլսի Միացեալ ընկերութեանը։ Չը մոռանանք որ տէր Յովհաննէս աւագ քահանան, ինչպէս որ տպվեցաւ իր ժամանակին, կարճ ժամանակում նուիրեց 200 րուբլ թէ Միացեալ ընկերութեան և թէ Սովելոց մասնաժողովին։

Տէր-Յովհաննէսի վրա խօսելով, ակամայ յիշում ենք այն պատիժը, որին ենթարկված է այդ արժանաւոր հովիւը։ Եթէ այսքան խիստ կերպով և անորոշ ժամանակով հոգևոր իշխանութիւնը պատժում է մի այդ տեսակ արժանաւոր քահանային, մի իբր թէ չնչին սխալի համար, ուրեմն ինչ պէտք է անի այն բոլոր քահանաների հետ, որոնք գրեթէ ամեն օր պսակում են թիֆլիսի հարուստ հայ ընտանիքներում ամենամօտիկ ազգականներին և այդ գիտէ ամբողջ քաղաքն էլ ու երևի էջմիածինն էլ։ Անցեալ տարին Գորու մէջ էջմիածնի թոյլտուութեամբ պսակեցին մի աղջիկ և մի տղայ, որոնք երկու հարազատ եղբայրների զաւակներ են. իսկ տէր Յովհաննէսին պատժում են, որովհետև նա հեռու ազգականներին է պսակել և այդ պսակը սխալ են համարում։

Շնորհակալութեամբ ստացանք Արսէն քահ. Բաղդասարեանց նրա հրատարակած գիրքը «Տասն պատգամք, կամ բարոյական պարտաւորութիւնք» վերնագրով։ Գիրքը տպված է Թիֆլիսում, Յովհ. Մարտիրոսեանի տպարանում, ներկայ 1881 թւին։ Վաճառվում է Կենտրոնական գրավաճառանոցում, գինը 25 կոպէկ է։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

Բարտելեմի Սենտ-Իլեր ներկայացրեց Հանրապետութեան նախագահին Ֆրանսիայի դեսպանների զեկուցումը այն հարցի առթիւ, թէ ինչպէս կը վերաբերվի Եւրոպան այն իրողութեանը, եթէ կառավարչական ղեկը անցնի Գամբետայի ձեռքը։ Այդ գործի կարևորութիւնը հասկանալի է եւրոպական պետութիւնների համար, որովհետև նրանք համոզված են, որ Գամբետայի քաղաքականութիւնը վրէժխնդրութեան քաղաքականութիւն կը լինի և որ նա կը խանգարէ եւրոպական խաղաղութիւնը։

Պատգամաւորների ապագայ ժողովի մեծամասնութեան ազդեցութիւն ունեցող անդամները հաղորդեցին Գամբետային իրանց դիտաւորութիւնը նրան ժողովի ժամանակաւոր նախագահ ընտրելու մասին, որպէս զի Գրեվի ի նկատի ունենայ, որ Գամբետա մեծամասնութեան իսկական առաջնորդ է, հետևապէս մինիստր նախագահի պաշտօնի իսկական կանդիդատ։ Այնուհետև պատգամաւորների ժողովի նախագահ կընտրվի Բրիսօն։ Գամբետա պատասխանեց, որ ինքն կատարելապէս կը հպատակվի մեծամասնութեան կամքին և կընդունի ամեն տեսակ պարտականութիւն, որ նրա վրա կը դնեն։ Այդպիսով շատով կազմվելու է Գամբետայի մինիստրութիւնը և այնպիսի մի ժամանակ, երբ նրա ժողովրդականութիւնը առաջվայ պէս մեծ չէ։ Այժմ Գամբետայի վրա այնքան յոյս չեն դնում, որքան մի քանի տարի առաջ էր։ Գամբետայի բազմաթիւ կողմնակիցները և բարեկամները նրան աւելի վնասեցին, քան թէ նրա բոլոր թշնամիները միասին։ Նրա մաքառումը իր թշնամիների դէմ նրան փառքով էր շրջապատում, մինչդեռ բարեկամների մատուցած ծառայութիւնները նրա դէմ գրգռում էին ամբոխին։ Գամբետայի օրգան համարված լրագիրների գործադրած անխոհեմ քաղաքական միջոցները, նրանց կատարեալ լռութիւնը այն առարկաների մասին, որոնք յարմար չէին Գամբետայի կուսակցութեան համար, նրանց պաշտպանութիւնը պատերազմական մինիստր Ֆարրի սխալներին, նրանց չափազանց չողոքորթութիւնը հանրապետականների առաջնորդին, այս բոլորը վերաբերում էին Գամբետային և այդ հանգամանքը նրան վնասում էր։ Դեռ անցեալ տարի Գամբետայի մինիստրութիւնը Ֆրանսիացիների համար մի ցանկալի բան էր, իսկ այժմ միայն Գամբետայի բարեկամները անհամբերութեամբ սպասում են, որ կազմվի այդ մինիստրութիւնը։ Մօտաւոր ապագան ցոյց կը տայ արդեօք կաջողվի Գամբետային վերականգնել իր բարոյական հեղինակութիւնը ժողովրդի առաջ։ Առժամանակ մամուլը նրա վրա անհաւատալի մեղադրանքներ է բարձում։ „Figaro" լրագիրը տպել է նրա հարազատ մօրաքրոջ նամակը, որի մէջ վերջինը գանգատվում է, իբր թէ Գամբետա նրան չէ օգնում և կատարեալ աղքատութեան մէջ է թողնում։ Նորերումս Ռօշֆորի լրագիրը մի յօդուած էր տպել, որով մեղադրում էր Գամբետային, թէ նա առաջուց էժան գներով ձեռք էր բերել Տունիսի արժէթղթերը և թէ այժմ յաջողեցրել է արշաւական ձեռնարկով Տունիսի պարտաւորութիւնները փող վաստակելու համար։ Երեկ Ռօշֆոր դատաստանի կենթարկվի բամբասանքի համար։

Արտաքին գործերի մինիստրը յանձնել է Տունիսի մինիստր տեղապահ Րուստանին դատաստանական գործ սկսել Ռօշֆորի դէմ Գամբետային և Րուստանին ֆինանսական խարդախութիւնների մէջ մեղադրելու համար։ Արմատականների լրագիրները այնու ամենայնիւ շարունակում են այդ մեղադրանքները։

Փոլ Ֆերրի մի շրջաբերականով հրամայեց պրեֆեկտներին օրիորդաց ուսումնարաններ հիմնել այն ծուխերի մէջ, որ խնայողութեան համար փոքր գաւառակների աշակերտուհիներին ուղարկում են կոյսերի պահած մասնաւոր ուսումնարանները։ Մինիստրը նկատում է, որ այդ ուսումնարանների մէջ օրիորդներին մեքենաբար են սովորեցնում, աշխատելով ցոյց տալ ծնողներին, որ թոշակադրամը 'ի զուր չէ վերցնում։ Երբ Ֆերրի Մօն-սու-Վօդրէի մէջ այցելեց ուսումնարաններին և այլ հիմնարկութիւններին, տեղական քաղաքագլուխը ասեց նրան հետևեալը. „Շնորհակալ ենք, որ դուք ոչնչացրիք այն կեղծ հիմնարկութիւնները, որոնք կրօնական ընկերութիւնների դիմակի տակ 'ի չարն էին գործ դնում ֆրանսիացիների հաւատարմութիւնը։ Ցոյց տուէք, որ հանրապետական կառավարութիւնը մինչև վերջը կը տանի իր գեղեցիկ գործերը և կատարելապէս աշխարհական հիմնարկութիւն կը դառնայ հասարակական կարծիքի ցանկութեան համեմատ։"

Փոլ Ֆերրի ներկայացրեց մինիստրների խորհրդին, որից զարմանալի բացակայ էին Կօնստան և Կազօ, իր խորհրդակցութիւնների հետևանքները հանրապետութեան նախագահի հետ։ Դեռ ևս ոչինչ չէ վճռված մինիստրութեան հրաժարականի կամ փոփոխութեան մասին։ Գրեվի մի շրջաբերական կուղարկի պատգամաւորների ժողովին և պրովինցիական նիստերի սկսվելու ժամանակ կը վճռվի այժմեան մինիստրութեան վիճակը։ Անհաշտների լրագիրները շարունակ մեղադրանքներ են բարձում քաղաքական առաջնակարգ գործիչների վրա։ „Lanterne" լրագիրը հրատարակեց երկու հեռագիրներ, որոնց Գրեվիի բարեկամները նրա յանձնարարութեան համեմատ ուղարկել էին Տունիս, բայց որոնք տեղ չէին հասել, որովհետև Բարտելեմի Սենտ Իլեր նրանց կալանաւորել էր։ Այդ հեռագիրները այն ժամանակն են ուղարկված, երբ դաշնագիր էր կապվում Տունիսի բէյի հետ, և ապացուցանում են, որ Գրեվի առանձին հաւատ չէր ընծայում իր մինիստրներին և նրանց գործակատարներին, որոնք իբր թէ ծածկում էին նրանից կատարված բանակցութիւնների մի քանի մանրամասնութիւնները։ Այս մեղադրանքները դեռ ևս հերքված չեն „Հաւաս ընկերութիւնից"։ Տունիսի հարցի քննութեան ժամանակ գլխաւոր գործիչ Րուստան հրաման է ստացել արտաքին գործերի մինիստրից տպագրական նոր օրէնքի հիման վրա դատ սկսել Ռօշֆորի դէմ։ Ռօշֆորին իրաւունք կը տրվի ապացուցներ ներկայացնել Րուստանի և այլ նշանաւոր գործիչների դրամական խարդախութիւնների մասին։ Գործը կը քննեն երդուեալ դատաւորները։ Գործը շատ հետաքրքիր է լինելու, որովհետև վկաների թւումն են Գամբետա, Շալմել-Լակուր և ուրիշները։

Այժմեան մինիստրութեան անդամներից երկուսը' Կօնստան և Կազօ, որոնք Գամբետայի կողմնակիցներ են, նոր ընտրութիւններից յետոյ գրեթէ բոլորովին չեն մասնակցում մինիստրական խորհուրդներին։ Կօնստան մի ճառ արտասանեց իր ընտրողների առաջ, որից ոչինչ չէ կարելի եզրակացնել ապագայի վերաբերութեամբ։ Նա ասաց, որ հանրապետական կառավարութիւնը պէտք է հաստատ և զգուշութեամբ գործէ։ Նա չը պէտք է տայ այնպիսի խոստումներ, որոնց չէ կարող կատարել։ Սենատի փոփոխութեան մասին մինիստրը ոչինչ չասաց։ Նա հերքեց այն համոզմունքը, իբր թէ կառավարութիւնը երբ և իցէ դիտաւորութիւն է ունեցել ճնշել կրօնը։ Այդպիսի միջոցները նա աւելորդ է համարում, բայց հոգևորականութիւնը պէտք է իր չափը ճանաչէ և չը խառնվի աշխարհական գործերի մէջ։

ԳԵՐՄԱՆԻԱ

Բիսմարկի հաշտուելը Վատիկանի հետ և նրա յայտնի բարեկամութիւնը նոր ընտրված եպիսկոպոս Կօրումի հետ, չը